63-ՐԴ ՆԻՍՏ

28 հունվարի 1919թ.

Բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Տեր-Խաչատրյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, արտաքին գործոց և լուսավորության մինիստրները:

Մինիստր-նախագահ և արտաքին գործոց մինիստր - Տալիս են պատասխան եղած հարցումներին ու սոց. դեմոկրատական ֆրակցիայի հարցապնդմանը՝ դեկլարացիան ուշացնելու, հարցումներին չպատասխանելու, անցուդարձի մասին խորհրդարանին իրազեկ չանելու:

Պատասխանից հետո խոսում են *Եր. Հարությունյան, Դ. Զուբյան:*

Առաջարկվում են բանաձևեր, քվեարկությամբ ընդունվում է դաշնակցական ֆրակցիայինը. «Լսելով սոց. դեմ[ոկրատական] ֆրակցիայի հարցապնդումը և

Մինիստր-նախագահի տված բացատրությունը, խորհրդարանն անցնում է հերթական հարցերին»:

Հ. Սարգսյան - Զեկուցում է խնամատարության մինիստրությունը խնամատարության և աշխատանքի մինիստրության վերածելու օրինագծի մասին:

Որոշվում է օրինագծի քննությունը հետաձգել մինչև հաջորդ նիստը:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է հաշմանդամ զինվորների և սպաների ապահովության օրինագծի մասին:

Գ ընթերցումով ընդունվում է օրինագիծը և հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Հ. Բուդաղյան - Զեկուցում է բանտարկյալ Իսմայիլ Նամազ օղլու ներման խնդրի մասին:

Խորհրդարանը լսելով զեկուցումը, ներումն է շնորհում հիշյալ Նամազ օղլուն՝ վերականգնելով նրա բոլոր իրավունքները, որ վերացրել էր ժամանակին դատարանը:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 11-ին:

«Զանգ», 12 փետրվարի 1919թ.